««ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԵՐ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ	««ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ

ՀՈՒՇԱԳԻՐ

համագործակցության մասին

ք. Վանաձոր « ——» հուլիսի 2019թ.

««Հավասար հնարավորություններ» ուսանողական քաղաքացիական նախաձեռնություն» երիտասարդական ՀԿ-ն, ի դեմս նախագահ ——————————— (այսուհետ՝ Կողմ 1), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն ՀԿ-ն, ի դեմս ՀԿ ներկայացուցիչ ———— ——————————, (այսուհետ՝ Կողմ 2), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սույն հուշագրով համագործակցության շրջանակներում Կողմերը պատրաստակամ են միմյանց աջակցել մասնագիտական և աշխատանքային գործունեության ընթացքում անհրաժեշտ խորհրատվությամբ, մասնագետներով և մասնագիտական հմտություն-ներով:

2.2. Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև.

2.2.1. երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի իրականացման,

2.2.2. գիտական կոնֆերանսների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման,

2.2.3. գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման,

2.2.4. համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման և Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկման և լուծման,

2.2.5. Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման,

2.2.6. սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, համապատասխան սարքավորումների, լաբորատոր և այլ միջոցների օգտագործման,

2.2.7. ինովացիոն, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման,

2.2.8. համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու,

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար: Սույն հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում, բացառությամբ հուշագրի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

Կողմերն առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադարձ համաձայնությամբ սույն հուշագրի 2-րդ մասով սահմանված կոնկրետ ուղղությունների հետ կապված ծառայությունները կարող են իրականացնել դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված ֆինանսական բնույթի

գրավոր համաձայնագրերով՝ կախված այս կամ այն Կողմի ուժերով իրականացվող աշխատանքների ծախսատարությունից:

5. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

5.2. Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն հուշագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է հուշագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն հուշագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն հուշագրի և դրա հիման վրա Կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:

8.2. Սույն հուշագրով ստանձնած պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.3. Սույն հուշագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8.4. Սույն հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿՈՂՄ 1	ԿՈՂՄ 2
««Հավասար Հնարավորություններ» ուսանողական քաղաքացիական նախաձեռնություն» երիտասարդական ՀԿ	**«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն ՀԿ**
Հասցե՝ _____	**Հասցե՝** _____
Հեռ.՝ _____	**Հեռ.՝** _____ _____
Նախագահ՝ _____	**Նախագահ՝** _____
_____ **ստորագրություն**	_____ **ստորագրություն**